



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Center *for*  
Responsible Mining

Հանքարդյունաբերության օրենսդրության  
բարեփոխման նախաձեռնություն

**Հայաստանի  
ընդերքօգտագործման մասին  
օրենսդրության  
բարեփոխման հիմնական  
հարցերի ամփոփագիր**

Դեկտեմբեր 2016

[mlri.crm.aua.am](http://mlri.crm.aua.am)

# Հայաստանի ընդերքօգտագործման մասին օրենսդրության բարեփոխման հիմնական հարցերի ամփոփագիր

Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն,  
ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

**Հիմնաբառեր`** Հանքարդյունաբերություն, Հայաստան, օրենսդրություն, բացեր

## Փաստաթղթերի շարքի և ՀՕԲՆ-ի մասին

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի այս շարքը պատրաստվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲՆ) ծրագրի շրջանակներում: ՀՕԲՆ-ը հնարավոր դարձավ **Թուֆենկյան» հիմնադրամի** ֆինանսական աջակցության շնորհիվ, նախաձեռնության նպատակն է երաշխավորել, որ հանքարդյունաբերությունը երկրին և տեղական համայնքներին տրամադրի բավարար օգուտներ: Նախաձեռնության նպատակներից է մշակել և Ազգային Ժողովի խմբակցություններին ներկայացնել այնպիսի օրինագծեր, որոնք կավելացնեն հանքարդյունաբերության տված հասարակական և տնտեսական օգուտները և միաժամանակ կնվազեցնեն շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ունեցած բացասական ազդեցությունները: ՀՕԲՆ-ի գործունեության գլխավոր առանցքը քաղաքացիական հասարակության, շահերի պաշտպանության խմբերի, գիտական հաստատությունների և համապատասխան ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու գործընկերությունն է: ՀՕԲՆ-ը համագործակցում է գործադիր և օրենսդիր մարմինների հետ` օրենքների նախագծերը ԱԺ-ում անցկացնելու համար: Ավելին իմանալու համար այցելեք` <http://mlri.crm.aua.am>:

## ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊԴԿ) հետազոտական աշխատանքի, կրթության և շահերի պաշտպանության միջոցով նպաստում է Հայաստանում սոցիալական, բնապահպանական և տնտեսական առումով պատասխանատու հանքարդյունաբերության` աշխարհում հայտնի լավագույն փորձի յուրացմանը, փոխանցմանն ու հարմարեցմանը: Այս նպատակին հասնելու համար ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին` բնապահպանական խմբերին, ֆինանսական հաստատություններին, հանքարդյունաբերության ոլորտի, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներկայացուցիչներին: Ավելին իմանալու համար այցելեք` <http://crm.aua.am>:

## Ինչպես հղում անել այս գեկույցին

Հայաստանի ընդերքօգտագործման մասին օրենսդրության բարեփոխման հիմնական հարցերի ամփոփագիր, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն, ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան, 2016): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից` <http://mlri.crm.aua.am>:

# Հայաստանի ընդերքօգտագործման մասին օրենսդրության բարեփոխման հիմնական հարցերի ամփոփագիր

## Խնդիր/բացթողում #1. Էկոհամակարգային ծառայությունների և տնտեսական գործունեության հետևանքով առաջացած վնասի արժեքի ճիշտ որոշում

### Առկա իրավիճակի նկարագրություն

Հայաստանում «Էկոհամակարգային ծառայություններ» հասկացության պարտադիր սահմանում չկա, և բնապահպանական վճարների հաշվարկման համար օգտագործվող մեթոդաբանության մեջ ներառված չէ Էկոհամակարգային ծառայությունները հաշվի առնելու մոտեցումը: Ներկայումս, կառավարության կողմից ընդունված մի շարք կարգերով սահմանված են ջրին, մթնոլորտին և հողին հասցված վնասի գնահատման խրթին մեթոդաբանություններ, սակայն այս մոտեցումը բավարար չէ երկու առումով: Նախ՝ այստեղ շրջակա միջավայրի յուրաքանչյուր տարր դիտարկվում է առանձին՝ շրջակա միջավայրը որպես փոխազդող բաղադրիչների համալիր համակարգ դիտարկելու փոխարեն, և երկրորդ՝ հաշվարկներում չի արտացոլվում շրջակա միջավայրին հասցված վնասի իրական արժեքը, որը կարող էր որոշվել, օրինակ, փոխարինման կամ ծախս-օգուտ մոտեցումների կիրառման միջոցով:

Այնուհետ, այս հաշվարկներում չի արտացոլվում հանքարդյունաբերական գործունեության հեռահար ազդեցությունները և չի ներառվում մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունը և բնակչության առողջապահական ծախսերը, որոնք առաջանում են առողջության վրա այդ ներգործությունների հետևանքով:

Հարկ է օրենսդրությունը համապատասխանեցնել Արիուսի կոնվենցիայով (որը սահմանում է, որ շրջակա միջավայրի բաղկացուցիչներն են օդը և մթնոլորտը, ջուրը, հողը, լանդշաֆտը, բնական գոտիները, կենսաբազմազանությունը և դրա բաղադրիչները, ինչպես նաև այս տարրերի փոխազդեցությունը), ինչպես նաև Կենսաբազմազանության մասին կոնվենցիայով ՀՀ-ի ստանձնած պարտավորություններին: Այս առումով Հայաստանը որոշ քայլեր է կատարել այս խնդիրների վերհանման ուղղությամբ.

- ՀՀ կառավարությունը 2013 թվականի ապրիլի 25-ին հաստատել է բնապահպանության ոլորտում նորարար ֆինանսատնտեսական մեխանիզմների ներդրման հայեցակարգը: Հայեցակարգում մանրամասն քննարկվում են «Էկոհամակարգային ծառայություններ» և «Էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարումներ» հասկացությունները:
- Այս հայեցակարգի հիման վրա 2013 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ կառավարությունը հաստատել է գործողությունների ծրագիր: Առաջին գործողությունը նախատեսում է Էկոհամակարգային ծառայությունների մասին օրենքի նախագծի մշակում: Վերջնաժամկետը 2015 թվականն էր, սակայն, ինչպես երևում է, նախագիծը դեռևս չի ներկայացվել Կառավարություն:
- Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի մասով Հայաստանի 5-րդ ազգային զեկույցը (2014թ. սեպտեմբեր) պարունակում է հետևյալ նախադասությունը. «Մասնավորապես, առաջարկվում է ներդնել Էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարումների համակարգ, որը գործնականում չի փոխարինի բնապահպանական և բնօգտագործման վճարներին, այլ կկիրառվի դրանց զուգահեռ»:
- 2015 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ կառավարությունը հաստատել է Կենսաբազմազանության պահպանման, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման 2016-2020թթ. ազգային գործողությունների ծրագիրը: Առաջին գործողությունը հետևյալն է՝ «Սահմանել Էկոհամակարգային ծառայությունների դրամական արժեքի որոշման մեթոդաբանություն (ջրի, հողի և կենսաբազմազանության ռեսուրսների դրամական արժեքի որոշում) և փորձարկել հատուկ պահպանվող բնական գոտիներում»:

### **Հաջորդ քայլեր**

Էկոհամակարգային ծառայությունների մոտեցման զարգացմանն ուղղված հայեցակարգային աշխատանքները կատարվել են, և այժմ անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունը կատարի համապատասխան գործողությունների ծրագրով նախատեսված քայլերը, այդ թվում՝ Էկոհամակարգային ծառայությունների մասին օրենքի մշակումը և Էկոհամակարգային ծառայությունների դրամական արժեքի որոշման մեթոդաբանության մշակումը:

## **Խնդիր/բացթողում #2. Ռազմավարության, քաղաքականության վրա հիմնված մոտեցման բացակայություն**

### **Առկա իրավիճակի նկարագրություն**

Որոշ չափով ոլորտը կարգավորվում է առանց հստակ քաղաքականության, իսկ այն դեպքերում էլ, երբ քաղաքականությունն առկա է, Կառավարության գործողությունները (կամ անգործությունը) երբեմն հակասում է սահմանված քաղաքականություններին:

Համաշխարհային բանկի «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» զեկույցի (2016թ. ապրիլ) հիմնական առաջարկությունն այն է, որ պետք է մշակվի երկրի ընդերքօգտագործման քաղաքականություն: Ներկայումս չկա հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող հստակ քաղաքականություն, սակայն ՀՀ կառավարությունը շարունակում է մշակել օրենսդրություն՝ երբեմն շատ քիչ քննարկումներ անցկացնելով<sup>1</sup>: Հարակից ոլորտներում, ինչպիսին է Էկոհամակարգային ծառայությունները, քաղաքականությունը մշակվում է հայեցակարգերի միջոցով, սակայն գործողությունների ծրագրերում ամրագրված ժամանակացույցը միշտ չէ որ պահպանվում է:

Համաշխարհային բանկի զեկույցի եզրակացությունն այն է, որ լուրջ հարցեր կան, որոնք պետք է բարձրացվեն կապված հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական, Էկոլոգիական և սոցիալական կայունության հետ, և որ դրանք կարելի է լուծել համակողմանի քաղաքականությունների միջոցով, որոնց արդյունքում կձևավորվի առավել կայուն ոլորտ: Շատ դեպքերում այս զեկույցում նշվում է, որ լուծումը պետք է գտնել ոչ թե ավելի շատ օրենքների ընդունմամբ, այլ առկա օրենսդրության հետևողական կիրարկմամբ: Ըստ այդմ, ինստիտուցիոնալ կառույցների զարգացումը կարևոր մաս ունի:

### **Հաջորդ քայլեր**

Ժամանակն է անցնել հանքարդյունաբերության ոլորտի հստակ ռազմավարության մշակմանը, և դա կարելի է վերջնական պատրաստել հաջորդ տարվա ընթացքում կամ այդ ժամանակահատվածում, ինչը նախատեսված է հայեցակարգի նախագծով: Միևնույն ժամանակ, ոլորտի վրա լուրջ ազդեցություն ունեցող օրենսդրական նախաձեռնությունները պետք է հետաձգել մինչև ռազմավարության վերջնական պատրաստումը:

## **Խնդիր/բացթողում #3. Հանքի փակում, ռեկուլտիվացիա**

### **Առկա իրավիճակի նկարագրություն**

Ընդերքօգտագործման իրավունք ստանալու դիմումը պետք է պարունակի հանքի փակման պլան, որը բաղկացած է հանքի ֆիզիկական փակման պլանից, հողի ռեկուլտիվացիայի, աշխատուժի վրա սոցիալական ազդեցությունների մեղմման պլանից, արտադրական թափոնների հեռացման մոնիթորինգի ծրագրից և հանքարդյունաբերական գործունեության ավարտից երկու տարի առաջ հանքի

---

<sup>1</sup> Օրինակ, 2017թ.-ի հունվարի 30-ին ՀՀ վարչապետը քննարկում է անցկացրել հանքարդյունաբերական ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ ռոյալթիների վճարման ռեժիմը մեղմացնելու հարցով, դրանից մեկ շաբաթ անց ՀՀ կառավարությունը հաստատել է օրենսդրության նախագիծը, և 2017թ.-ի փետրվարի 28-ին Ազգային ժողովում նախագիծն անցել է վերջին ընթերցումը:

վերջնական փակման հաստատված պլանից՝ ի լրումն նշված պլանի իրականացման ֆինանսական երաշխիքների: Ֆինանսական երաշխիքները կազմված են Շրջակա միջավայրի պաշտպանության ֆոնդին կատարվող վճարներից: «Ընդերքի մասին» օրենսգրքով և ՀՀ կառավարության՝ 2012թ.-ի օգոստոսի 23-ի թիվ 1079 որոշմամբ՝ ընդերքօգտագործման պայմանագրի ստորագրման պահին մոտավոր հաշվարկվում է ռեկուլտիվացիայի և հանքի փակման ծախսը և կատարվում է առնվազն 15% նախնական վճարում: Մնացած մասը վճարվում է հավասար տարեկան վճարումներով, որոնք բաշխվում են ընդերքօգտագործման լիցենզիայի գործողության ժամկետի կտրվածքով: Սա նշանակում է, այդուհանդերձ, որ մինչև հանքի փակումը ոչ մի ժամանակային կետում ամբողջ գումարը լիարժեք երաշխավորված չէ և, ավելին, չկա գնաճը հաշվի առնելու որևէ հնարավորություն:

### **Հաջորդ քայլեր**

Եիշտ աշխատակարգ է այն, որ հանքի փակման պլանը գործի հենց սկզբից ներկայացնելու և մինչև ընդերքօգտագործման լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը այն պարբերաբար թարմացնելու պահանջը: Գովելի բարեփոխում է նաև Շրջակա միջավայրի պաշտպանության ֆոնդին վճարումներ կատարելու պահանջը: Այդուհանդերձ, հարկ է ուշադրություն դարձնել գործող սխեմայի լրամշակմանը, որպեսզի ընդերքօգտագործման լիցենզիա ունեցողը պարտավորված լինի տրամադրել Ֆոնդին վճարման ենթակա գումարի մնացորդին համարժեք ֆինանսական երաշխիք, ինչպես նաև կատարել գնաճով պայմանավորված ճշգրտումներ:

## **Խնդիր/բացթողում #4. Կուտակային ազդեցության գնահատում**

### **Առկա իրավիճակի նկարագրություն**

ՀՀ օրենսդրությունը չի պարունակում Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գնահատելիս նաև կուտակային ազդեցության գնահատում կատարելու հստակ պահանջ: Սա համարվում է շրջակա միջավայրի փորձաքննության պետական գործառույթի խնդիր, որն իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը: Մասնավորապես, օրենքում ամրագրված է, որ ՇՄԱԳ-ի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը պետք է տրվի նախագծի բոլոր բացասական և դրական ազդեցությունների, ինչպես նաև դրանց փոխազդեցության ուսումնասիրության հիման վրա: Այնուհետև, առավելագույն արտանետումների և արտահոսքերի մասով թույլտվությունը, ենթադրվում է, որ ընկերությանը պետք է տրամադրվի կուտակային ազդեցությունների գնահատման հիման վրա, սակայն գործնականում դա չի նկատվում, ինչպես ակնհայտ է դառնում նաև

մի շարք ՇՄԱԳ հաշվետվություններից<sup>2</sup>: ՇՄԱԳ-երն ավելի հաճախ պարունակում են մի բաժին, որտեղ ամփոփ նկարագրվում է տվյալ նախագծի տարածքի էկոլոգիական վիճակը. կուտակային ազդեցությունների գնահատման հնարավորությունը, որպես կանոն, կարգավորվում է այս բաժնում ներկայացված աղոտ նկարագրությամբ: Օրինակ՝ «ներկա պահին շրջակա միջավայրի վիճակը կարելի է գնահատել բավարար», «մոտակայքում արդյունաբերական այլ գործունեություն չի իրականացվում կամ այլ ձեռնարկություն չի գործում, և տարածքը զերծ է մարդածին կամ տեխնածին բացասական ազդեցություններից», «տարածքի աշխարհագրական դիրքը նպաստավոր է ընդհանուր ֆոնային աղտոտման դիսպերսիայի համար» և այլն: Որոշ դեպքերում օդի և ջրի աղտոտման մասով ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների բազայից վերցված ելակետային տվյալները ներկայացվում են ընդհանուր նկարագրությամբ՝ բնական միջավայրին վերաբերող բաժնում, իսկ աղտոտման ծավալների հաշվարկը ներկայացվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններին վերաբերող բաժնում: Այդուհանդերձ, առավելագույն թույլատրելի կոնցենտրացիայի չափորոշիչների, այդ չափորոշիչները գերազանցող արտանետումների չափի վերլուծությունը և նոր վտանգավոր նյութերի առաջացման հետևանքով կուտակային ներգործությունների հավանականության գնահատումը բացակայում է:

Ավելին, ՇՄԱԳ օրենքով ամրագրված է, որ գնահատման մեթոդը հաստատվում է Կառավարության կողմից, սակայն շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ներգործությունը գնահատելու մեթոդի մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշում դեռևս չկա: 2016 թվականի հուլիսի 29-ին ՀՀ կառավարությունն ընդունել է արձանագրային որոշում, որով հաստատվում է «ընդերքօգտագործման և շահագործման թույլտվությունների դիմելու գործընթացում ԿԱԳ հաշվետվությունների պատրաստման ուղենիշները»: Ուղենիշները պատրաստվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ և արտացոլում են միջազգային լավագույն գործելակարգերը, սակայն դրանց կիրառումը պարտադիր բնույթ չի կրում:

### **Հաջորդ քայլեր**

Շահեկիցների հետ քննարկումների միջոցով ՀՀ կառավարությունը պետք է մշտադիտարկի, թե որքանով են կիրառվում «ընդերքօգտագործման և շահագործման թույլտվությունների դիմելու գործընթացում ԿԱԳ հաշվետվությունների պատրաստման

---

<sup>2</sup> Օր.՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքը, Բարձրադիրի ոսկու հանքը, Քարաբերդի ոսկու հանքը, Թեժ սար Նեֆելինիցենիտի հանքը, Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքը և Լիչքի պղնձի հանքը, ինչպես նաև Ամուլսարի ոսկու հանքի բավականին առաջանցիկ ՇՄԱԳ-ը:

ուղենիշները» և պետք է դիտարկի այդ ուղենիշները պարտադիր դարձնելու վերջնաժամկետ սահմանելու հարցը:

## Խնդիր/բացթողում #5. Բնապահպանական վճարների մակարդակը ցածր է և դրանք չեն ուղղվում տեղական համայնքներին

### Առկա իրավիճակի նկարագրություն

Հանքարդյունաբերության ոլորտի կողմից շրջակա միջավայրին հասցված վնասի դիմաց վճարումների մասով սահմանված իրավական դաշտով կարգավորվում է հանքարդյունաբերական ընկերությունների կողմից վճարումների կատարումը պետական բյուջե: Գումարների մի մասը վերադարձվում է հանքի մոտ գտնվող տեղական համայնքներին՝ մի շարք տեղական նշանակության ներդրումների միջոցով, որոնք ուղղված են շրջակա միջավայրի վիճակի բարելավմանը: Այս վճարումների առավել հասցեական օգտագործումն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքով (1997թ.) ամրագրված է, որ «բնապահպանական ծրագրերի համար հատկացված բյուջետային միջոցների ընդհանուր գումարը չպետք է քիչ լինի նախորդ բյուջետային տարում հավաքագրված բնապահպանական և բնօգտագործման վճարների ընդհանուր գումարից»: Այս սկզբունքն արտացոլում է հարկման քաղաքականությունները, որոնք չվերականգնվող պաշարների վարձակալության վճարները վերադարձնում են հանրությանը, սակայն քաղաքականության մեջ առկա են անորոշություններ, որոնք արագացնում են չվերականգնվող պաշարների սպառման տեմպը՝ այս կերպ հակադրվելով այն կայունության սկզբունքին, որ «հետագա սերունդները չպետք է ավելի վատ վիճակում հայտնվեն»:

Ավելին, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը (2001թ.), ըստ էության, սահմանում է, որ բնապահպանական վճարների շրջանակներում վճարվող գումարները պետք է ամբողջությամբ հատկացվեն ազդակիր համայնքներին, սակայն գործնականում դա չի կատարվում: Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ վճարները վճարվում են կենտրոնական բյուջե, և միայն դրանից հետո են բաշխվում ազդակիր համայնքներին՝ սուբվենցիաների միջոցով և ներկայացված ծրագրերի հիման վրա: Առկա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով հավաքագրված միջոցների ավելի քան կեսն օգտագործվում է այլ առաջնահերթ խնդիրների ֆինանսավորման համար:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարեկան զեկույցում բերված թվերը վկայում են, որ 2010-2015 թվականներին վճարված բնապահպանական վճարների ծավալն ավելի քան երեք անգամ ավելացել է՝ 2010 թվականի 9105 միլիոն ՀՀ դրամից



հասնելով 31256 ՀՀ դրամի՝ 2015 թվականին: Բայցևայնպես, որպես ՀՆԱ-ի տոկոսային մաս այս թվերը չափազանց փոքր են (մոտ 0.6 տոկոս՝ 2015 թվականին), որպեսզի իրապես արտացոլեն տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրի պաշարների արժեզրկման/հասցված վնասի դիմաց հավաքագրված վարձավճարները: Հայաստանին մոտ տնտեսական պարամետրեր ունեցող երկրներում շրջակա միջավայրի դեգրադացումը ՀՆԱ-ի 2-ից 5 տոկոսի սահմաններում է: Սա նշանակում է, որ բնական միջավայրի դեգրադացման իրական արժեքը մոտ ութ անգամ գերազանցում է հանրագումարային վճարումները:

### **Հաջորդ քայլեր**

ՀՀ կառավարությունը պետք է դիտարկի այս շրջանակը վերանայելու հարցը, որպեսզի հավաքագրվող բնապահպանական վճարների մակարդակն իրապես արտացոլի շրջակա միջավայրին հասցված վնասը, ինչպես նաև ապահովի, որպեսզի վճարների ավելի մեծ մասը ներդրվի ազդակիր համայնքներում:

## **Խնդիր/բացթողում #6. Գերակա շահ**

### **Առկա իրավիճակի նկարագրություն**

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է այն բազային նորմը, որ ի շահ հանրության որևէ գույքի պարտադիր ձեռքբերում/օտարում կարող է իրականացվել օրենքով սահմանված կարգով: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (2006թ.) այս որոշման կայացումը պատվիրակում է ՀՀ կառավարությանը, այլ ոչ՝ դատարաններին:

Ավելին, տպավորություն է, որ այս օրենքում ամրագրված՝ «հանրային գերակա շահ» հասկացությունը հստակեցման կարիք ունի: Ընդերքօգտագործումը միանշանակ նշված է որպես գերակա շահի դրույթի կիրառման պատճառ. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը վերաբերում է «(այլ ոլորտների շարքում) կարևոր նշանակություն ունեցող հետախուզական և ընդերքօգտագործման ծրագրերի իրականացման ապահովմանը»: Սա երկու հարց է առաջացնում. նախ՝ ինչ հիմքով է ընդերքօգտագործման ծրագիրը համարվում «կարևոր նշանակություն ունեցող» և երկրորդ՝ արդյոք սեփականության օտարման մոտիվացիան «հանրության կարիքն» է, արդյոք չպետք է լինի «ծախս-օգուտ» վերլուծություն՝ հասկանալու համար արդյոք ընդերքօգտագործման ծրագրի օգուտները գերակշռում են հանրությանը պատճառված էկոլոգիական վնասները, թե ոչ:

Բացի այդ, օրենքը չի սահմանում հստակ սահմանափակումներ, որոնք կարգելեն գերակա շահի դրույթի կիրառումը:

### **Հաջորդ քայլեր**

Հարկ է քննարկել «հանրային օգուտ» հասկացությունն առավել մանրամասնելու և «ծախս-օգուտ» մեթոդաբանություն մշակելու հարցը՝ հանրության օգուտները գնահատելու համար, ինչպես նաև սահմանել, թե ընդերքօգտագործման (և այլ) ծրագրերի առնչությամբ ինչ է նկատի առնվում «կարևոր նշանակություն ունեցող» եզրույթով:

Հայաստանի ամերիկյան համալսարան  
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն  
Մարշալ Բադրամյան 40,  
Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն  
+374-60-612520  
crm@aua.am  
crm.aua.am

[mlri.crm.aua.am](http://mlri.crm.aua.am)

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության  
կենտրոնի՝ Հանքարդյունաբերության  
օրենսդրության բարեփոխման նախաձեռնությունը  
(ՀՕԲՆ) ֆինանսավորվում է Թուֆենկյան  
հիմնադրամի կողմից:

T U F E N K I A N

FOUNDATION